

Հայտարարություն՝ «Էվերի Դեյ» ՓԲ ընկերությանն (Jur.am) անհրաժեշտ է ենթակառուցվածքների և տրանսպորտային տնտեսության կառավարման գործընթացի պլանավորման մասնագետ:

Համառոտ տեղեկատվություն ընկերության վերաբերյալ՝

Ընկերությունը գործունեություն է իրականացնում ջրերի արտադրության և իրացման շուկայում: Գործունեություն սկսել է 2008 թվականից, ապահովում է արտադրությունից իրացում ողջ շղթան, սպառողների շրջանում ունի լայն տարածում: Ընկերությունը շուկայում հայտնի է ՋուրՋուր, Մաքուր ջուր և Բյուրեղ ապրանքանիշերով 19 լիտրանոց տարաներով ջրերի իրացմամբ:

Պաշտոնը՝ ենթակառուցվածքների և տրանսպորտային տնտեսության կառավարման գործընթացի պլանավորման մասնագետ:

Մրցույթի մասնակցության պահանջները՝

Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ավարտական կուրսերի ուսանող, ինչպես նաև Համալսարանի շրջանավարտ հանդիսացող անձինք, ովքեր ուսման ընթացքում եղել են ակտիվ և նախաձեռնող, ցուցաբերել են բարձր առաջադիմություն: Դիմումատուները պետք է լավ տիրապետեն MS Excel ծրագրին:

Աշխատանքային փորձի առկայությունը և օտար լեզուների իմացությունը կդիտարկվի որպես առավելություն:

Գործառույթները

1. Ընկերության ենթակառուցվածքների և տրանսպորտային տնտեսության անխափան գործունեության համար պահանջների գնահատում,
2. Ընկերության ենթակառուցվածքների և տրանսպորտային տնտեսության ի նորոգման և նորացման նպատակով ձեռքբերվող ապրանքների և ծառայությունների շուկայի դիտարկում,
3. Ընկերության ենթակառուցվածքների և տրանսպորտային տնտեսության նորոգման և նորացման նպատակով հնարավոր մատակարարների հետ բանակցում և համագործակցություն ուղղությամբ աշխատանքների իրականացում,

4. Ընկերության ենթակառուցվածքների և տրանսպորտային տնտեսության նորոգման և նորացման գծով հսկողական բնույթի աշխատանքների իրականացում:
5. Հաշվետվությունների պատրաստում և տնօրենին ներկայացում:

Աշխատավայրի հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Դավիթ Բեկի 54/5

Դիմումատուները պետք է իրենց CV-ները ներկայացնեն a.manaseryan@jur.am էլ. հասցեին մինչև 25.02.2020: